

ՏԵՂԵԿԱԼՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N/N	Առաջարկությունը, դիտողությունը	Քննարկման արդյունքը
<i>ՀՀ ֆինանսների նախարարություն</i>		
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի	
<i>ՀՀ արդարադատության նախարարություն</i>		
1.	Նպատակահարմար է 2006թ. հունվարի 12-ի N 73 –Ն որոշման հավելված 1-ով հաստատվող ցանկը շարադրել նոր խմբագրությամբ՝ դրանում ներառելով նախագծով լրացվող համապատասխան սյունակը:	Ընդունված է
<i>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</i>		
1. 2. 3.	Նախագծին կից ներկայացված N 1 հավելվածում ընդգրկված չեն «Հիմնական ընդհանուր կրթության հիմքով» և «Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության հիմքով» ենթասյունակները, այն դեպքում, երբ նախագծով չի նախատեսվում այդ ենթասյունակները հանել: Ներկայացնել հիմնավորում ՀՀ կառավարության 12.01.2006թ. N 73-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված ցանկից որոշ մասնագիտություններ հանելու վերաբերյալ, ինչպես նաև այդ պարագայում անհրաժեշտ ենք համարում, որպեսզի նախագիծը պարունակի դրույթներ՝ նշված որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկը նոր խմբագրությամբ Որոշման N 1 հավելվածի 0608 դասիչի «Առկա ուսումնառության տևողությունը /տարի/» սյունակը լրացնել «1» թվով:	Առաջարկվող դիտողությունները որոշման նախագծին չեն վերաբերվում, հետևաբար դրանք չեն ընդունվում: Ընդունված չէ, քանի որ նշված դասիչը հանված է աղյուսակից:
<i>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</i>		
1.	Նախագիծը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներին:	Ընդունված չէ, քանի որ որոշման նախագիծը մշակված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-29 հոդվածներին համապատասխան:
2. 3.	Որոշման նախագծի 1-ին կետով սահմանված «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ըստ ուսուցման հիմքի, ձևի, տևողության և որակավորումների» ցանկում կատարվող փոփոխությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության վերը նշված որոշման N 1 հոդվածին Հաշվի առնելով, որ հեռակա ուսուցմամբ միջին միջին	Ընդունված չէ, քանի որ առաջարկվող փոփոխությունը կատարվում է ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման հավելված 1-ում, հետևաբար համապատասխանում է հավելվածին:

	<p>մասնագիտական կրթություն ստանալու նպատակով, գյուղատնտեսական քոլեջներ են դիմում անձինք, որոնք ժամանակին չեն ստացել միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն, ուստի ՀՀ կառավարության վերը նշված որոշման N 2 հավելվածի «Յեռակա ուսուցում /տևողությունն առնվազն միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության հիմքով/» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Յեռակա ուսուցում /տևողությունը/» /Յիմնական ընդհանուր կրթության հիմքով», «Միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության հիմքով»/:</p>	<p>Ընդունված չէ, քանի որ նախագիծը վերաբերվում է նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության մասնագիտությունների ուսուցման հիմքին, ձևին, տևողությանը և որոկավորումների ցանկին: Իսկ աջաջարկվող փոփոխությունը N 2 հավելվածում գտնում ենք ոչ նպատակահարմար:</p>
<i>Երևանի քաղաքապետարան</i>		
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	
	<i>ՀՀ Արարատի մարզպետարան</i>	
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	
	<i>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան</i>	
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի	
	<i>ՀՀ Շիրակի մարզպետարան</i>	
	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	
	<i>ՀՀ Կոտայքի մարզպետարան</i>	
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	
	<i>ՀՀ Արմավիրի մարզպետարան</i>	
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	
	<i>ՀՀ Տավուշի մարզպետարան</i>	
1	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	
	<i>ՀՀ Արագածոտնի մարզպետարան</i>	
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	
	<i>ՀՀ Լոռու մարզպետարան</i>	
1.	Դիտողություններ և առաջարկություններ չունի:	